



ՀԱՏՈՐ Ի՛-

1889

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՄՆ ՄԱՍԻՍ

Մեր հայրենի հնաւանդ յիշատակարանաց մէջ ամենէն աւելի նուիրական և քաղցրագոյն է Մասիսն, որ իւր այեզարդ գագաթամբն ընդ դարս ժամանակաց կը հսկէ մեր աշխահին վրայ, ծրար մ'է այն և աղբիւր յոգունց սրբազան աւանդութեանց, երկրորդ խանձարուրք մարդկութեանս, որ իւր գեղապատշաճ դրիւքն և երջանիկ բաստին կը պարծի քան զայլ երիցագոյն և հաւասար նմանիսն իւր, Հաւասարապէս թէ 'ի հեթանոսութեան և թէ 'ի քրիստոնէութեան յաճախ ուխտագնացութեամբք նշանաւոր եղել է իրրու կեդրոն մ'է խուզարկութեանց իմաստնագոյն մարդկան, որք միշտ՝ այլ մանաւանդ յետին դարուս մէջ յաճախ այցելել են զըտ. նեւրու անդ գեռ ևս նախկին մարդկութեան և անցելոց դարուց սրբազան նշխար մը:

Ահա սոյն այցելուաց մէջ նշանաւոր տեղի մը կը բռնեն՝ Պ. Մարկով և Պ. Գովալէվսկի, որք անցեալ տարւոյն Օգոստոսի 13 ին կարենալով մինչև 'ի գագաթն ելնել, նշանակեցին գրով ճանապարհաց հանգամանքները, այլ և այլ բարձրութեանց չափերը, ջերմաչափին ցուցած աստիճանները, գետնին կամ ժայռերուն բնութիւնը, և ճանապարհին վրայ պատահած հետաքրքրական կենդանիները կամ միջատները և ծաղիկները. ահա այս ամենայն բովանդակեալ կան սոյն հատուածիս մէջ:

Անցեալ տարիներուն այլ և այլ ճանապարհորդաց գրած խորհրդ-
դածութիւնքը Մասիսին վրայ գրեթէ մեծաւ մասամբ թարգմանաբար
հրատարակեալ լինելով 'ի Բազմավէպին, պատշաճ դատեցինք հրա-
տարակել ևս սոյն յօգուածը, որ գուցէ իւր ինչ ինչ նորագոյն տե-
ղեկութեամբք կարենայ լոյս մ'ընծայել բանասիրաց :

Մասիս լեռն՝ որ Հայաստանի հրաբխային գրութիւնը կը կողմէ, երեք
սահմանագլխոց միջակայքը կը գտնուի, Ռուսիոյ, Պարսկաստանի և Տա-
կաստանի : Հիւսիսային կողմը կը տարածուի Երասխայ հովիտն . իսկ հա-
րաւային արեւելեան և արեւմտեան կողմերէն չըջապատեալ է 'ի լեռանց :

Այս լեռնային գրութիւնն անհուն խարխիս մ'ունի, երկըննալով հիւսիս-
արեւմտեան կողմէն 'ի հարաւ - արեւելեան, որոյ շրջապատն է գրեթէ հա-
րիւր փարսախ . այս խարխիս վրայ կ'ամբառնան երկու լիւրիք, յորոց բար-
ձրագոյնն՝ որ այնքան սրածայր չէ, կը կոչուի Մեծ Մասիս . իսկ փոքրագոյնն
որ կատարեալ կոնաձև և սրածայր է, կը կոչուի փոքր Մասիս : Մեծ Մա-
սիսն է 590 42' լայնութեան աստիճանին ներքեւ, և 610 86' երկայնութեան .
բարձրութիւնն է 16, 916 ոտք . գագաթն միշտ ծածկեալ է յաւերժական
ձեամբք : իսկ փոքրն Մասիս, 590 88' լայնութեան և 620 16' երկայնութեան
աստիճանաց ներքեւ, որոյ գագաթն ձիւնն կը հալի Յուլիս ամսոյ կէսին . և
կը մնայ միայն այն ճեղքուածներուն և խողովներուն մէջ ուր հազիւ երեք
կը թափանցէ արեւուն ջերմութիւնն :

Մեծ Մասիսին հիւսիս - արեւելեան կողմը կը տարածուի Ս . Բակրայ կո-
չուած աղբիւրն, յորում կը գտնուի մի մեծ սառնակոյտ . անտի կը բխէ
պղտոր առուակ մը և կը թափի Երասխաձորին մէջ : Մեծ և փոքր Մա-
սիսց մէջտեղ, սակաւի մի հեռու այն անգունդէն՝ որ զանոնք կը գտնէ
իրարմէ, առուակ մը կը հոսի, զոր Մարդար - Բալար կը կոչեն . ուր բնիկ
փիւրջք ամառ ատեն կը հաստատեն իրենց խորանարակ տեղիքը՝ բոլոր
ընտանեօք և հօտերով : Ահա այս տեղս հասանք Օգոստոսի 11ին երեկոյեան
գէմ, և երկրորդ օրը այն տեղէն մեկնեցանք ելնելու Մեծ Մասիսին գա-
գաթը :

Օգոստոսի 12ին առաւօտը՝ մեծ ուրախութեամբ տեսանք որ օդն մեզի
նպաստաւոր էր : Երկինքը յստակ և անամպ էր, և այն սոսկավիթխար
հսկայն (Մեծ Մասիսն), որ իւր յաւիտենական ձեամբք կ'ամբառնայր առ-
ջևնիս, գեղեցիկ և պայծառ կերպով կը փայլէր նորածագ արեւուն ճառա-
գայթններէն լուսաւորուած : Նոյն աւուր օգոյն ջերմութիւնը առաջուրէն
կը դուշակէինք . բայց ընաւ վախ չկայր սաստկաշունչ հովի՛ք՝ որ շատ երկիւ-
ղայի է այսպիսի բարձրութեանց վրայ :

Անդ մերձակայ տեղերը կը գտնուէր Խաղտխաղ պահակատուն մը, ուստի
մէկէն ձիւր բերուեցան . և 'ի գագաթն տարող այն նըրակածան ուղւոյն
մէջ սկսանք միաշար կարգաւ վեր ելնել : Մինչև 10, 000 ոտք բարձրու-
թեամբ կարող էինք ձիւր երթալ : Այս բանս մեզի համար մեծ մխիթարու-
թիւն մ'էր . վասնզի 3,000 ոտք վեր ելնելն՝ մինչև այն տեղը ուր պիտի
թողուինք ձիւրը, շատ ժամանակ կը պահանջէր, և հարկ էր ըստ կարելոյն
խնայել մեր ուժոյն և զօրութեան՝ այն խնդրոյն նկատմամբ, որ մեր միակ
նպատակն էր :

Թէպէտ և ուղիներն դժուարագնաց էին, սակայն մեր բաւական երա-

գութեամբ կը յառաջէինք 'ի վեր, այնպէս որ ժամը տասին փոքրիկ դաշտակ մը հասած էինք, որ 10, 500 ոտք բարձրութիւն ունէր. ահա աստ կ'ըսէրք մեր ոտքով վերելքը:

Մինչքան խաղախներն սակաւ ինչ խռիւ կը հաւարէին, Քիւրդներն մի ոչխար մորթեցին և խորտիկ մը պատրաստեցին. չափաւոր ինչ քանակութեամբ ևս միս և կիւնցին, զոր կուգէինք ճանապարհի պաշար մեր Հետ տանել, խակոյն բեռնակիրներն ու առաջնորդներն որք մեզմէ ետեւ մնացել էին, եկան մեզ հասան, և մեք իրենց յանձնեցինք մեր բեռներն. և յետ վերջին ողջունատուութեան մեր ընկերակցաց, որք մինչև այն տեղ մեզ ուղեկից եկած էին, և երկրորդ օրը Փոքր Մասիս գագաթնի պիտի ելնէին Պր. Քովալէ վսիկի Հետ. ճամբայ կ'անց մեք տասներկու օր և կէսին ցորեկէն ետքը, ընդ ամէնէն 15 հոգի. երեք պաշտօնական անձինք՝ Պ. Պոպով, Ս. Իվանով և ես, խաղախն Մանուկով, երկու առաջնորդք և ինն բեռնաբարձք: Սնունդը՝ ուսկից վեր պիտի ելնէինք, ցիրուցան սփռուած էին հրադղխային ժայռերու կոտորներ մին միւսոյն վերայ: Մի կը յենուինք մեր պողպատէ ծայրերով գաւազաններուն վերայ, զժուարաւ մագլիւղով ու շատ նեղութեամբ կը յաջողէինք հետեւել մեր առաջնորդաց, որք այժմեւ թեթեւութեամբ մի քարածայուէն ի միւսն կը ցատկէին: Որովհետեւ լեռան ելքը դիրին էր ի սկզբան, բաւական չուտով յառաջ գացինք. այնպէս որ մինչ առաջին անգամ կանգ առինք Աբ. Սուլադեր քով, տեսանք որ երեսուն վայրկենի մէջ 500 ոտք բարձրութիւն կտրած էինք մեր մեկնած կէտէն վեր: Աբ. Սուլադերի բարերութեան ծանօթեցումով կ'ըսէինք, որ մեր յայտնուելով երկրիս երեսը կ'ենէն, ուսկից մեր ըրիկէ Սարգար. Բուլաք առուակը, ինչպէս կ'ըսեն այն տեղի բնակիչքն: Ջրոյն պաղով (Սանիկրատի) զրոյէն 2,8 աստիճան վեր էր: Մի քանի վայրկեան հանգչելէն յետոյ շարունակեցինք մեր ուղին դեռ աւելի երազութեամբ, մինչ զի 15 վայրկենի մէջ 300 ոտք ընթացանք, ու կէսօրէն երկու օր և կէս ժամ ետքը 12, 200 ոտք բարձրութեան աւելի վեր ելանք: Մեր կտրած զառ 'ի վեր ճանապարհն կը գտնուէր 180 22' աստիճանին ներքեւ. սակայն կան ևս տեղեր որ մինչև 300 կը հասնին: Ընդհանրապէս շատ զժուարին էր որոշել զառիվայրից աստիճանը, քարերուն գրից յաճախ փոփոխութեանց և անոնց տարածութեանց զանազանութեան համար:

Խաչած մտոյ մը կտոր ու գաւաթ մը գինի ճաշակելով՝ քիչ մը ոյժ ստացանք, որով կրցանք աւելի բարձր ելնել. բայց անապարեղով միշտ, որ արեւը չը մտած հասնինք այն տեղն, ուր գիշերը պիտի անցընէինք. մեր առաջնորդին խօսքին համեմատ կէս ժամու ճանապարհ գեռ ևս կայր մեզ կատարելու: Ժամը 5 էր, 12, 900 ոտք բարձրութեան վերայ, սկսաւ թեթեւ ձիւն մը գալ մտն տասն վայրկենի. ժամը 5 ու կէսին 13, 200 ոտք բարձրութեամբ գտանք փոքրիկ դաշտավայր մը ուր որոշեցինք գիշերը անցունել:

Մեր առաջնորդքն իսկոյն վերցընելով տեղի քարերը, թաղոյ մեծ կտոր մը տարածեցին գետին վրայ, ուր բազում ախորժանօք նստեցանք հանգչելու յետ գրեթէ անընդհատ հինգ ժամ վեր ելնելու: Մեր բեռնաբարձք սակաւթիւ լինելով, անկարելի էր փայտ կամ ուրիշ վառելու նիւթեր մեզի Հետ մէկտեղ տանել, որոնք բոլոր պատրաստուելու պիտի ծառայէին. ուստի գոհ եղանք ալքօյի պղտիկ կանթեղիկով, զոր միշտ հետերին կը տանէինք ամէն գիպաց մէջ: Այլ որքան ցաւ և յուսահատութիւն տիրեց մեզ,

1. Աբ. Սուլադեր անվան սպիտակ-քար.

երբ տեսանք որ կանթեղիկն կոտրել էր. ուստի հարկ եղանոյն օրը առանց թէյի անցնել: Մեր ելած տեղւոյն բարձրութիւնն հասկի թէ 12,000 ոտք էր, և ահա թե՛ն գլխու ցաւ մը զգացի. ինձի այնպէս կերակար թէ գլուխս մամլոյ մէջ սեղմուած է: Այն տեղը հասնելով ուր նոյն գիշերը պիտի անցնէինք, սաստիկ սրտի խառնուրդ մ'ունեցայ. և հետզհետէ այնքան սաստկացաւ՝ որ նոյն իրիկունը բնաւ չկրցայ կերակուր ուտել. և ապա երիճաղիս (bourka)¹ մէջ պատատուելով, վեր 'ի վերայ յարգարեալ անկողնոյս վրայ տարածուեցայ և ջանացի հանգիստ քնանալ՝ երկրորդ աւուր կարևոր ուժն առնելու համար. յոյնպէս ընկերներէս մին՝ Պոպով, թէպէտև պղտիկ տուկարութիւն մը կը զգայր, սակայն հաւասարապէս ըրաւ իւր ընթրիքը, իսկ միւս ընկերս իվանով՝ որ 'ի սկզբանէ հետէ միշտ ողջ առողջ էր, արևը մտնելէն յետոյ սկսաւ սաստիկ գլխու ցաւով նեղիլ, որ երթալով աւելի սաստկացաւ և բոլոր գիշերը հառաչելով անցուց:

Արևն արդէն վաղուց հետէ ամփոփել էր հորիզոնին հտե իւր ոսկի ճառագայթները. և արջնաթոյր գիշերոյ ծածկոյթն պատեց լեռները, բլուրները և հովիտները: Արծաթափայլ լուսինն՝ թուխ ամպոց սփիւռ տարածութիւնը յուշիկ և հեղիկ հատանելով, մերթ Ընդ մերթ երկնից մթին խորերէն դուրս գալով՝ կը լուսաւորէր յանկարծ մեր ոտից ներքև տարածուած կախարդիչ պատկերը: Մեր աչաց առջև անմալ երկնից պայծառ երևին վրայ յատապազոյնս նկարեալ էր Փոքր Մասիսին նստման գանգուածն, որոյ զագաթին վրայ որոշ կը տեսնուէին ձեան մի քանի երիզներ: Յաջորդումը՝ կապտագոյն կը ծածանէին հեռաւոր լեռներն, իսկ 'ի ձախակողմին՝ լուսնին լուսով ոռոգեալ լայնարձակ դաշտորայք կը տարածէին, որոց միջէն արծաթեայ թելի մը նման կը սալէր Նրասին: Իսկ ոտիցս ներքև բերանաբաց կը սպասէր ահաւոր անդունդն, որոյ յատակին վրայ հեռաւոր կրակաց բոցերն աղօտալոյս կը փայլէին. անդ 'ի Սարգար — Բուլաք մեր ընկերքն էին որ կը պատրաստէին իրենց ընթրիքը:

Այն գիշերը իմ տկարութեանս պատճառաւ չ'կրցայ օգիրեութեան զըննողութիւնքս ընել. մինչև իսկ անկարելի եղաւ նոյն գիշերուան օդոյ ցրտութեան ստորնագոյն աստիճանը ճշդիւ նշանակել. բայց նախընթաց երեկոյին և միւս աւուր առաւօտեան կանուխ ըրած շինման պատկան գիտողութիւններէն՝ զորս մեծ փութով նշանակել էի, կրցայ հետևեցունել թէ գիշերուան մէջ ջերմաչափն զրոյէն 7 աստիճան (սանթիգրատ) վար իջած պէտք է լինի: Թէպէտ քնոյ շատ պէտք կը զգայի, սակայն բոլոր գիշերը չ'կրցայ աչքերս գոցել:

Այլ և այլ մեղամազձիկ խորհրդածութիւններ մտքէս կ'անցնէին. կը մտածէի երկրորդ աւուր մեր ընկիւք ճանապարհորդութեան վրայ, արդեօք պիտի կարենամք յաջողութեամբ կատարել զայն թէ ոչ: Այլ որքան աւելի սարսուռ և տխրութիւն կը պատէր զիս, երբ կը լսէի իվանովին հեծեծանքները և հառաչները, որ իրենց տխուր եղանակովն կ'ընդհատէին գիշերային խուլ լուծիւնը: Բնաւ պիտի չմոռնամ ես այն գիշերը. . . .

Այլ որքան զմալլելի տեսարան. երբ միւս կողմը շրջացայ, և ահա բարձրածայր ձիւնազարդ հսկայ գագաթն (Մասիս)՝ պանծալ 'ի լոյս լուսնի կարծես թէ երկնից աստղազարդ կամարին վրայ կը շողողար: Այն թափանցիկ ջահաւորեալ Ովկիանոսին երեսին վրայ՝ ամպ մը թեթևակի և յուշիկ մօտեցաւ և վայրկեան մը կանգ առնելով գագաթին վրայ՝ կարծես թէ բան մը

¹. Bourka, տեսակ մը երկայնաձև վերարկու է այնքի մազերով քնուած:

խորհրդածելով, և ապա յօդս ցրուեցաւ: Որպիսի՞ հրաշալի տեսարան, որ, պիտի՞ գիւթիւ և հրապուրիչ պատկեր, ողջոյն քեզ Մասիս, մնասջիր բարեաւ մինչև ցառաւօտ, գոչեցի ես. և ապա լաւ մը պատատուեցայ վերարկութիս մէջ՝ գիշերուան ցրտոյն ազգեցութիւնը զգալով:

Օգոստոսի 15 ին, զեռ առաւօտեան ժամն Յէր՝ մեք ամէնքս կազմ և պատրաստ էինք ճամբայ ելնելու: Թէ և արևն գեռ չէր ծագած, բայց բաւական լուսաւոր էր՝ որով կրնայինք որոշել ճանապարհը:

Որչափ որ բովանդակ գիշերը անքուն և անսուաղ անցուցել էի, վասն զի նախընթաց երեկոյեան ժամը կէն 'ի վեր չէի ճաշած, սակայն գեռ բաւական ուժ ունէի և կը յուսայի մինչև զազաթը հասնիլ:

Նոյնպէս ևս Պոպով, որ ինձի նման անհանգիստ գիշեր մ'անցուցել էր, այլ առողջ էր և ուժով: Իսկ մեր երրորդ ընկերոջ իվանովի՝ որ գեռ տկարութիւն կը զգայր և անհանգիստ էր, խորհուրդ տուի որ ետ դադնայ. այլ նա պատասխանեց, թէ զմեզ պիտի չթողու և որչափ որ ուժը կը բաւէ պիտի քալէ:

Հինգ Քիւրգ ձգեցինք այն տեղը՝ ուր գիշերս անցուցել էինք, և մենք ինն հոգւով ճամբայ ելանք անտի: Միայն ամենէն կարեւոր և պէտք եղած բաները հետերնիս առինք, կերակուր, ըմպելիք և մեր պօռքսները: Իսկոյն կոնաձև ժայռի մը քովէն անցանք, որ Մասիսի հարաւ — արևելեան կողմն վրայ կը բարձրանայ. այս տեղս կրնայ իբրև ձեանց վերջին սահման համարուիլ, թէպէտ շատ դժուարին է ճշգիւ որոշել Մասիսին ձեանց սահմանը: Վասնզի տեղ տեղ ժայռերուն փոսից կամ ծամածուռ ճեղքումներուն մէջ ձեան կը պատահինք, մինչդեռ այլ ուրեք ընդարձակ միջոցներ մինչև զազաթը ընաւ ձիւն չենք գտներ: Ընդհանրապէս խօսելով կրնանք ըսել, թէ ընտելնաւոր ձեանց սահմանին միջին բարձրութիւնն հարաւ — արևելեան կողման՝ կրնայ իբրև 13, 500 ոտք հաշուիլ: սակայն այս հաշիւս բոլորովին ստոյգ չէ, այլ մերձ հաւանականութեան: Վերջ յիշատակեալ մեծ ժայռին ստորոտէն կը տարածուի՝ հասարակ ուղղութեամբ՝ բաւական ընդարձակ ձիւնամած դաշտ մը, որոյ հակման (inclinaison) չափն է գրեթէ 35 աս. տիճան:

Ձեան պաղպաղուն և թափանցիկ կոյտից ներքև առուակի մը ձայն կը լսուի, որ սառուցին ներքևէն դգրչելով կը հոսի. և որովհետև բնաւ չը տեսնուիր, կրնանք ենթադրել, թէ անգունդի մը մէջ թափելով գետինն տակ կ'անհետանայ, որ շատ հաւանական է՝ լիբան խարխալը կազմող ժայռից փխրուն լինելուն համար:

Այս ձիւնամած գաշտակս ունի իր երկու կողմը որձաքարի և անդէրտի ժայռերէ կազմուած լիբանց երկու անձուկ շղթաներ, որոնք իրարու վրայ խռնեալք են խառնիխառն. այս երկու շղթաներէս մին՝ որ է ձախակողմանն՝ պիտի տանէր զմեզ 'ի գազաթն: Իվանով տեսնելով որ ևս քան զեւ կը սաստկանայ իր տկարութիւնը, հոսկ ապա գիշաւ մեր աղաչանաց և միտքը գրաւ ետ գաւնալ նորէն առաջին տեղը. և այս կերպով բաժնուեցանք հոն իրարմէ 13,600 ոտից բարձրութեան վերայ, և մենք շարունակեցինք ելնել 'ի գազաթը:

Մերեք ընդ մերթ մեր ճանապարհին վրայ կը հանդիպէինք աւաղային տեղեաց՝ որք ծածկեալ էին մանրախիճ քարերով. որով գեռ աւելի կը դժուարանայր մեր վերելքն, վասնզի ոտքերնիս շարունակ կը սահէին այն խարխուլ գետինն երեսին վրայ:

Պոպով, որ յառաջն քաջաբար կ'արշաւէր, տեսայ որ երթալով ետ կը

մնար և հազիւ կրնար մեզի հետեւիլ. ըսաւ նա՝ որ եթէ սակաւիկ մի այրելի նիւթ գտնուէր, ըստակ մը թէյն խփոյն զինքը պիտի զօրացնէր: Մեր առաջնորդներէն մին այս խօսքերս լսելով, ըսաւ մեզ, թէ տեսնէ է քիչ մը վերը փայտէ ձողմը, որ կրնար մեզի ջնուցիլ ըլլալ, « Յառաջ երթանք, կ'ըսէր նա զմեզ քաջալերելու համար, մօտենանք ձողին, հոն պիտի ունենաք թէյ և պիտի կարենաք հանգիստ առնուլ: »

Եւ շարունակեցի իմ ճանապարհս. բայց Պոպով ըսաւ, թէ այլ ևս կարող չէր յառաջ գնալ. այն ատեն որոշեցինք որ երկու բռնաբարձք երթան և բերեն վերը յիշատակեալ ձողը. իսկ մեք քարերու վրայ ընկողմանեցանք, և տաժանեալ երկար աշխատութենէ՝ թեթև թմրութեան մէջ ինկանք, մինչև որ պատրաստեցաւ թէյն:

Երբ արթնցայ ես այն թեթև քնէն, ո՛րքան ուրախացայ տեսնելով այն պայծառ բոցը, որոյ վրայ կ'եռայր ջուրն՝ որ մեր զօրացուցիչ ըմպելոյն եփման պիտի ծառայէր: Փայտէ ձողն գրեթէ սպառելու մօտ էր ամբողջ, միայն երկու կտորներ մնացել էին, որոց վրայ տեսայ երկու արձանագրութիւն: Միոյն վրայ կը տեսնուէր C. B. իսկ միւսոյն վրայ՝ H. K. Ըսու գրեթով: Այս գրերս երկու ճանապարհորդաց անուանց սկզբնատառքն էին, որք մի քանի տարի առաջ ուզեր էին ելնել 'ի գազաթն Մասիսի. այլ բաւական ուժ չ'ունենալով որ կարենան ելնել մինչև 'ի գազաթը, գրողմեցին իրենց անուանց սկզբնատառքը փայտէ երկար ձողին վրայ, զոր անդ գտնել էին 'ի ճանապարհին:

Դեռ ևս չ'կրցայ ստուգիւ որոշել, թէ ո՞վ արդեօք թողել էր այն ձողը այն ճանապարհին վրայ. շատ հաւանական թուի, թէ Պր. Սթիլին գաւազանն ըլլայ, զոր կանգնել էր յամին 1845. և գուցէ թէ ձեան հիւսք զայն վար թաւալել են այն տեղը՝ ուր գտանք մենք: Եւ այսպէս յետ սակաւիկ մի զօրանալու շարունակեցինք մեր ուղին. օդն շատ գեղեցիկ էր, երկինքն յստակ և անամպ. թեթև և անոյշ զեփուռ մը կը շնչէր հարաւէն: Մեր զինաց լեռան ձիւնամած գագաթն կանգնած կը փայլէր արևուն ճառագայթներէն, և 806 ոտք բարձրութեան վրայ քարերու մէջ գտայ միջատ մը՝ որ գրեթէ հրաշիւք ուղջ մնացեր էր. սաստիկ կարմիր գոյն մ'ունէր, որոյ անունն է Ուրգան կարմիր եօթնակիշ (Coccinella septem punctata). Բովանդակ ճանապարհին հակման աստիճանն կը փոփոխէր 200 — 300:

Յետ անընդհատ մի քանի ժամ գնալու, մեծ ժայռի մը պատահեցանք, որ նախ ստորոտէն անելանելի երևցաւ մեզ: սակայն քանի մը վար թաւալած քարերու պատճառաւ՝ առաջնորդք ճանապարհ մը գտան, որ յիրաւի շատ դժուարագնաց էր, բայց ոչ բոլորովին անել կամ անգնաց, այնպէս որ քիչ ժամանակի մէջ այն վտանգաւոր անցքն ևս անցանք: Ճանապարհին երկայնութեամբ՝ շատ տեղեր քարերուն տակ խիստ թափանցիկ սառույցէ պատեալ տեղեր տեսայ. այն փայլուն գետնոց վրայէն կը հոսէին շատ առուակներ: Հաւանական էր որ սառույցի դաշտերու միջէն կ'անցնէին, որոնք լեռան գագաթէն վայր թաւալած ժայռերով ծածկուած էին: Քարոնց կոյտերուն թանձրութիւնն ամէն տեղ նոյն չլինելով, անոնց ներքև գտնուած սառույցն միայն տեղ տեղ կը տեսնուէր:

15, 000 ոտք բարձրութեան վրայ ծաղիկներ գտայ, որոնք քարերուն մէջ գտնուած պղտիկ աւազուտի մը վրայ կ'աճէին և կը մեծնային: Յորեկուան ժամը մէկին այն քարուտ ժայռին գագաթը հասանք, որուն վրայ առաւօտէն 'ի վեր կը մազլցէինք. անտի և անդր ուրիշ թեթև զառ 'ի վեր մը կար, սակայն շատ դժուարութիւն կը կրէինք վեր ելնելու, հողոյն փերուն ըլլա-

լուն Համար. յետ որոյ անմիջապէս երեցաւ գազաթն լի և ծածկեալ ձնալքը: Երոզուն երեսէն գրիթէ 16, 100 ոտք բարձրութեան վրայ էինք. Յերմաշափն արևուն մէջ յանկարծ զրոյէն 22 աստիճան վեր բարձրացաւ. Այն տեղ սակաւ մի Հանգչեցանք, որպէս զի կարելի ըլլար մեզ ապա մէկ շնչով կրտսրել մնացած մասը և հասնել մինչև 'ի գազաթն. Սակայն չկրցանք երկար տառն կենալ անդ և հասգիստ առնուլ, վասնզի արդէն իսկ ուշ էր ժամանակնս, և հարկ էր փութալ անապարել որ կարելի ըլլար ապա դարձեալ վար իջնել նախ քան զգիշերն. դարձեալ, մեծ և մթին ամպեր կը բարձրանային հարաւային կողմէն և մրրկի վախ կար: Հագիւ թէ քանի մը քալ առինք, և ահա ծծմբոյ սաստիկ անախորժ հոտ մը սկսաւ նեղել զմեզ. իսկոյն առաջնորդներն թաշկինակօք ամենայն փութով ծածկեցին բերաններն. ես ծածկիր էի զլուխս վեղարով, և որովհետեւ շատ դժուարաւ կրնայի չունչ առնուլ և ծծմբոյ հոտն ևս այնքան չէր նեղեր զիս, վերուցի գայն զլխես. Այն ծծմբային հոտը որ Մասիսի հրաբոխային մասերը թափանցելով, անտի օդուն մէջ կը ծաւալէր և հովն մեր ձախ կողմէն փչելով մեզի կը բերէր, թէպէտ շատ անախորժ է, սակայն բնաւ չնշարճելութիւն չպատճառէր, և ուրիշ վնասակար ազդեցութիւն մը չընէր մարդուս գործարանաց վրայ, ինչպէս կ'ըսեն ոմանք 'ի ճանապարհորդաց: Հուսկ ապա կտրելով այն աւազուտ միջոցը, մօտեցանք գազաթն. ուր բռնաբարձք մի քանի վայրկեան կանխեցին քան զմեզ, և բարձրածայն սկսան փառաւորել զԱլլահն, որ արժանի ըրաւ զիրենք կոխել Մասիսին սրբազան գազաթը. զկնի միջոցէի ժամը երկուքին հասանք Մեծ Մասիսին նուիրական կատարը:

Անդ 'ի գազաթնս Մանուկով խաղախն և զխաւոր առաջնորդն Բաբա' որոնք հետեւորին միշտ հրացան կը կրէին, 25 հարուած նետեցին, զորս լըսեցին թէ վարը գտնուած միւր ընկերքն և թէ փոքր Մասիսին գազաթը եղողներն, ինչպէս յետոյ ըսին մեզ: Երբ գազաթը հասանք Յերմաշափն կը ցուցնէր 0 աստիճան. յանկարծ սաստիկ ձիւնեց, և յետ մի քանի վայրկեանի 2 աստիճանէն ևս վար իջաւ:

Մեծ Մասիսին գազաթը ընդարձակ տարածութեամբ ձիւն կը գտնուէր, զոր երկու մաս կը բաժնէր գահավէժ մի, որ կը սկսէր հիւսիս-արեւելեան կողմէն գրիթէ գետնին հաւասար, և ապա երթալով ևս քան զեւ կ'ընդլայնէր և կը խորունկնար զէպ 'ի Պայագիտ քաղաքին կողմը, որոյ խորութիւնն էր գրեթէ 100 ոտք. անոր յատակը կը սկսէր ուրիշ անդունդ մ'ևս վերին վար ուղղակի կտրած, որոյ խորութիւնը չ'կրցայ չափել՝ անկարելի ըլլալով եղբրը մօտենալ:

Բոլորովին ձնան տակ ծածկուած ըլլալով գահավէժն, որ շատ քիչ անգամ կը պատահի, չկրցայ ճշգիւ չափել անոր տարածութիւն. նոյնպէս չկրցայ նաև տեսնել այն կամարածե խոր ճեղքը, որ կը կտրէ գահավէժը իւր բովանդակ լայնութեամբ, որուն վրայ կը խօսին երկու ճանապարհորդք, Արիւս և Սիվոյորով, որոնք մինչև գազաթը ելել են, մին 1845 տարւոյն, իսկ միւսն 1882ին: Այս տարի այնքան ձնամբ ծածկուած էր, ինչպէս նոյն իսկ առաջնորդներն կ'ըսէին, որ բնաւ այնքան ձիւն չէին տեսած և մինչև անգամ կը տարակուսէին գազաթը հասնելուն վրայ: Իսկ 1882 տարւոյն, կ'ըսէին մեզ առաջնորդք, թէ բոլորովին բաց էր գահավէժն, մինչև ամենայն զրուրթեամբ կրնային միջէն անցնել: Գազաթնս վրայ գտնուած ձիւնն պինդ էր և չոր, և երբեք մարդու ոտք չխրիր: Աջակողման գազաթն, որ է հարաւ-արեւելեան, փոքրիկ դաշտ մ'ունի թեթև կերպով զառ 'ի վեր. երկայնութիւնն է 90 ոտք, և լայնութիւնը 60 ոտք: Այս գազաթին մէկ մաս

սըն որ կը նայի Երասխաձորին վրայ, գրեթէ ամենեւին ձիւն չկայ և լի է քարամբք, յորոց հաւաքում մ'ըրիւ իսկ ձեան գանգուածն է հարուստ րեւմտեան ուղղութեամբ, որ երթալով գեռ աւելի կը թանձրանայ: Եւ այսպէս գալտին մէջտեղը, ձեան թանձրութեան չափն է 2 ոտք. իսկ հարաւային ծայրն այնչափ ձիւնով ծածկուած էր, որ չկրցայ չափել. շատ հաւանաւ կան է որ այն ձեան տակ սառոյցի գանգուած մ'ըլլայ:

Չախակողմեան գագաթն, որ է Հիւսիս—արեւմտեան, ունի նոյնպէս ձիւնամած գալտակ մը, որոյ մէջտեղը փոքրիկ բարձրաւանդակ մը կը գտնուի: Ասոր տարածութիւնն աւելի մեծ է քան աջակողմեան գագաթին: Գոյորշեայ բազմութիւնն՝ որք տօթագին աւուրց մէջ կը բարձրանան Մասիսին շրջակայ հովիտներէն և լեռներէն, մեր ոտից ներքեւ գտնուած հրաշալի և ընդարձակ տեսարանը կը ծածկէր մեր աչքէն: Ըստ պատմելոյ Խոժոյց զօրավարին, որ 1850 տարւոյն Հինգ օրէ աւելի կեցաւ գագաթին վրայ, պայծառ և յստակ օրուան մը մէջ զիտակով կը տեսնուին գագաթէն Սև ծովն, Կասպից ծովն, Կասբէք և Եւրոսու լեռներն (որք 400 մղոն հեռու են Մասիսէն): Աջակողմեան գագաթին վրայ գտայ ուրիշ որդան կարմիր (*Coccinella septem punctata*) մ'եւս, որ առջինէն աւելի սակաւ մի խոշոր էր և աւելի տոգոյն կարմիր գոյնով: Մօտերը գտնուեցաւ նաև գրեթէ մի ոտանշափ երկայնութեամբ Հին և ժանգաւար բեւեռ մը: Ոմանք 'ի ճանապարհորդաց' անոր արտաքին տեսքէն դատելով՝ այս անհիմն ենթադրութիւն կրցել են ընել, թէ Նոյի ժամանակէն մնացած ըլլայ (?): Եւ շատ կը փափագէի մնալ գագաթին վրայ որքան որ կարելի է, սակայն առաջնորդներն հակառակ կեցան իմ փափաքիս, հարաւային կողմը ցուցնելով թուխ թուխ ամպոց կուտակը, որ ահագին փոթորիկ մը կը սպառնայր: Իսկ բռնաբարձքն իրենց բռնները ճամբուն վրայ ձգած ըլլալով թեթեւալու համար, եթէ և վայրկեան մ'իսկ ուշանայինք անդ, կամ ցրտէն կամ անօթութեանէն պիտի մեռնէինք: Փոթորկի միջոց այսպիսի բարձրութիւններէն վար իջնալն անկարելի է, վասն զի ձիւնէն աչքերն կը կուրանան և գիւրաւ կը մոլորուի ուղիղ ճամբէն:

Հարկ եղաւ որ հաւանիմ անոնց, ապա թէ ոչ՝ մինակ պիտի մնայի. ճամբայ ելանք վար իջնալու՝ յետ աջակողմեան գագաթին վրայ քարերէ բուրգ մը շինելու 5 ոտք բարձրութեամբ, որ հեռագիտակով տեսնուեցաւ Սարգար—Բուլաբէն:

Շարունակելի

